ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԱՊՁԲ-22-7/39-1

ք.Երևան «02» 11 2022թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և ՌԻՄՆԱ ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Համբարձումյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը.

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը.

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից.

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը.

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը.

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում.

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Զննել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.4 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.5 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.6 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.7 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.8 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.9 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.10 Որակավորման և պայմանագրի ապահովում ներկայացրած անձը պարտավոր է ապահովումների գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 22310000 / քսաներկու միլիոն երեք հարյուր տասներեք հազար/ ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման

ամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին (եռամսյակներին), բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Վաճառողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

5.2 Եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Գնորդը պայմանագրի 5.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված հինգ աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

5.3 Եթե մատակարարված ապրանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Գնորդը չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 5.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Վաճառողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Գնորդը ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.4 Եթե պայմանագրի 5.2 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Եթե պայմանագիրը ներառում է մեկից ավել չափաբաժին, ապա տուգանքը հաշվարկվում է պայմանագրով այդ չափաբաժնի համար սահմանված ընդհանուր գնի նկատմամբ: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նպատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 Հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.13 Պայմանագրով նախատեսված ապրանքների մատակարարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում:Ընդ որում, Վաճառողը համաձայնագիրը կնքում և Գնորդին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Գնորդի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8.14 Պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ ՆՏԱ գլխավոր վարչությունը, իսկ կառուցվածքային ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչությունը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	**ՎԱՃԱՌՈՂ**
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ՌԻՄՆԱ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ ք.Երևան, Բաբայան 36, 72/1
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	**«ԱԿԲԱ ԲԱՆԿ» ԲԲԸ, «Զեյթուն» մ/ճ**
Հ/Հ 900011144079	ՀՀ 220300126772000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01022893
ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ	տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Ա.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԱՊՁԲ-22-7/39-1 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

1.Ուսադիր գնդապետի /գրասենյակային/ (զույգ): Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ: Թեք կտրվածքներով լայնակի կողմում, եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանում է պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացման լեզվակը, որի վերջնամասում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս, ուսադիրի ամրացման համար մշակվում է 5.0 մմ տրամագծով անցք: Ամրացման լեզվակի լայնությունը 25 մմ: Ուսադիրի արտաքին մասը մշակված է մուգ կանաչ գույնի պոլիամիդե գործվածքից: ՈՒսադիրի ստորին եզրից 25-ական մմ հեռավորության վրա և իրարից՝ կենտրոնից կենտրոն 25 մմ հեռավորության վրա ասեղնագործված են երկու հատ 20 մմ տրամագծով աստղեր և դրանցից 25 մմ հեռավորության վրա՝ կենտրոնում ասեղնագործված է ևս մեկ հատ 20 մմ տրամագծով աստղ:Աստղերի գույնը՝ մուգ կանաչ: Ուսադիրի հակադարձ կողմը պետք է պատված լինի նույն երանգի առնվազն 210 գրամ մակերեսային խտությամբ գործվածքով: Ուսադիրի հակադարձ կողմում՝ ներքին եզրակարից 35 մմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 20 մմ լայնքով պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնու-թյունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկա-ության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը արկղերով, քանակը մեկ արկղում՝ մինչև 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%:

Ուսադիրի դաշտի զարդանախշը համաձայն Հավելված 1:

2.Ուսադիր փոխգնդապետի /գրասենյակային/ (զույգ): Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ: Թեք կտրվածքներով լայնակի կողմում, եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանում է պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացման լեզվակը, որի վերջնամասում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս, ուսադիրի ամրացման համար մշակվում է 5.0 մմ տրամագծով անցք: Ամրացման լեզվակի լայնությունը 2.5 սմ: Ուսադիրի արտաքին մասը մշակված է մուգ կանաչ գույնի պոլիամիդե գործվածքից: ՈՒսադիրի ստորին եզրից 25-ական մմ հեռավորության վրա և իրարից՝ կենտրոնից կենտրոն 25 մմ հեռավորության վրա ասեղնագործված են երկու հատ 20 մմ տրամագծով աստղեր: Աստղերի գույնը՝ մուգ կանաչ: Ուսադիրի հակադարձ կողմը պետք է պատված լինի նույն երանգի առնվազն 210 գրամ մակերեսային խտությամբ գործվածքով: Ուսադիրի հակադարձ կողմում՝ ներքին եզրակարից 35 մմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 20 մմ լայնքով պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը արկղերով, քանակը մեկ արկղում՝ մինչև 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվա-նումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%:

Ուսադիրի դաշտի զարդանախշը համաձայն Հավելված 1:

3.Ուսադիր մայորի /գրասենյակային/ (զույգ): Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ: Թեք կտրվածքներով լայնակի կողմում, եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանում է պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացման լեզվակը, որի վերջնամասում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս, ուսադիրի ամրացման համար մշակվում է 5.0 մմ տրամագծով անցք: Ամրացման լեզվակի լայնությունը 2.5 սմ: Ուսադիրի արտաքին մասը մշակված է մուգ կանաչ գույնի պոլիամիդե գործվածքից : ՈՒսադիրի ստորին եզրից 45 մմ հեռավորության վրա՝ ուսադիրի կենտրոնում ասեղնագործված է մեկ հատ 20 մմ տրամագծով աստղ: Աստղերի գույնը՝ մուգ կանաչ: Ուսադիրի հակադարձ կողմը պետք է պատված լինի նույն երանգի առնվազն 210 գրամ մակերեսային խտությամբ գործվածքով: Ուսադիրի հակադարձ կողմում՝ ներքին եզրակարից 35 մմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 20 մմ լայնքով պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը արկղերով, քանակը մեկ արկղում՝ մինչև 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%:

Ուսադիրի դաշտի զարդանախշը համաձայն Հավելված 1:

4.Ուսադիր կապիտանի /գրասենյակային/ (զույգ): Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ: Թեք կտրվածքներով լայնակի կողմում, եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանում է պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացման լեզվակը, որի վերջնամասում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս, ուսադիրի ամրացման համար մշակվում է 5.0 մմ տրամագծով անցք: Ամրացման լեզվակի լայնությունը 2.5 սմ: Ուսադիրի արտաքին մասը մշակված է մուգ կանաչ գույնի պոլիամիդե գործվածքից: ՈՒսադիրի ստորին եզրից 25-ական մմ հեռավորության վրա և իրարից՝ կենտրոնից կենտրոն 25 մմ հեռավորության վրա ասեղնագործված են երկու հատ 13 մմ տրամագծով աստղեր և դրանցից 25-ական մմ հեռավորության վրա՝ կենտրոնում՝ ասեղնագործված են ևս երկու հատ 13 մմ տրամագծով աստղեր: Աստղերի գույնը՝ մուգ կանաչ: Ուսադիրի հակադարձ կողմը պետք է պատված լինի նույն երանգի առնվազն 210 գրամ մակերեսային խտությամբ գործվածքով: Ուսադիրի հակադարձ կողմում՝ ներքին եզրակարից 35 մմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 20 մմ լայնքով պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը արկղերով, քանակը մեկ արկղում՝ մինչև 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվա-նումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%: Ուսադիրի դաշտի զարդանախշը համաձայն Հավելված 1:

5.Ուսադիր ավագ լեյտենանտի /գրասենյակային/ (զույգ): Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ: Թեք կտրվածքներով լայնակի կողմում, եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանում է պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացման լեզվակը, որի վերջնամասում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս, ուսադիրի ամրացման համար մշակվում է 5.0 մմ տրամագծով անցք: Ամրացման լեզվակի լայնությունը 2.5 սմ: Ուսադիրի արտաքին մասը մշակված է մուգ կանաչ գույնի պոլիամիդե գործվածքից:ՈՒսադիրի ստորին եզրից 25-ական մմ հեռավորության վրա և իրարից՝ կենտրոնից կենտրոն 25 մմ հեռավորության վրա ասեղնագործված են երկու հատ 13 մմ տրամագծով աստղեր և դրանցից 25 մմ հեռավորության վրա՝ կենտրոնում ասեղնագործված է ևս մեկ հատ 13 մմ տրամագծով աստղ: Աստղերի գունը՝ մուգ կանաչ: Ուսադիրի հակադարձ կողմը պետք է պատված լինի նույն երանգի առնվազն 210 գրամ մակերեսային խտությամբ գործվածքով: Ուսադիրի հակադարձ կողմում՝ ներքին եզրակարից 35 մմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 20 մմ լայնքով պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը արկղերով, քանակը մեկ արկղում՝ մինչև 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվա-նումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%:

Ուսադիրի դաշտի զարդանախշը համաձայն Հավելված 1:

6.Ուսադիր՝ լեյտենանտի /գրասենյակային/ (զույգ): Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ: Թեք կտրվածքներով լայնակի կողմում, եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանում է պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացման լեզվակը, որի վերջնամասում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս, ուսադիրի ամրացման համար մշակվում է 5.0 մմ տրամագծով անցք: Ամրացման լեզվակի լայնությունը 2.5 սմ: Ուսադիրի արտաքին մասը մշակված է մուգ կանաչ գույնի պոլիամիդե գործվածքից: ՈՒսադիրի ստորին եզրից 25-ական մմ հեռավորության վրա և իրարից՝ կենտրոնից կենտրոն 25 մմ հեռավորության վրա ասեղնագործված են երկու հատ 13 մմ տրամագծով աստղեր: Աստղերի գույնը՝ մուգ կանաչ:Ուսադիրի հակադարձ կողմը պետք է պատված լինի նույն երանգի առնվազն 210 գրամ մակերեսային խտությամբ գործվածքով: Ուսադիրի հակադարձ կողմում՝ ներքին եզրակարից 35 մմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 20 մմ լայնքով պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը արկղերով, քանակը մեկ արկղում՝ մինչև 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվա-նումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%:

Ուսադիրի զարդանախշը համաձայն Հավելված 1:

7.Ուսադիր՝ ավագ ենթասպայի /գրասենյակային/ (զույգ): Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ: Թեք կտրվածքներով լայնակի կողմում, եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի

Ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանում է պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացման լեզվակը, որի վերջնամասում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս, ուսադիրի ամրացման համար մշակվում է 5.0 մմ տրամագծով անցք: Ամրացման լեզվակի լայնությունը 2.5 սմ: Ուսադիրի արտաքին մասը մշակված է մուգ կանաչ գույնի պոլիամիդե գործվածքից: ՈՒսադիրի ստորին եզրից 25 մմ և իրարից՝ կենտրոնից կենտրոն 25-ական մմ հեռավորության վրա ասեղնագործված են երեք հատ 13 մմ տրամագծով աստղեր: Աստղերի գույնը մուգ կանաչ: Ուսադիրի հակադարձ կողմը պետք է պատված լինի նույն երանգի առնվազն 210 գրամ մակերեսային խտությամբ գործվածքով: Ուսադիրի հակադարձ կողմում՝ ներքին եզրակարից 35 մմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 20 մմ լայնքով պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը արկղերով, քանակը մեկ արկղում՝ մինչև 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվանումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%:

Ուսադիրի դաշտի զարդանախշը համաձայն Հավելված 1:

8.Ուսադիր՝ ենթասպայի /գրասենյակային/ (զույգ): Ուսադիրը ուղղանկյունաձև է, որի լայնակի մեկ կողմը ունի թեք կտրվածքներ: Թեք կտրվածքներով լայնակի կողմում, եզրից 8.0 մմ դեպի ներս՝ կենտրոնում, մշակված է 5.0 մմ տրամագծով անցք, իսկ հակադիր կողմի ներքին եզրակարից՝ ուսադիրի ամբողջ երկայնքի կենտրոնով ամրանում է պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ նյութից պատրաստված ամրացման լեզվակը, որի վերջնամասում՝ եզրից 8.0 մմ դեպի ներս, ուսադիրի ամրացման համար մշակվում է 5.0 մմ տրամագծով անցք: Ամրացման լեզվակի լայնությունը 2.5 սմ: Ուսադիրի արտաքին մասը մշակված է մուգ կանաչ գույնի պոլիամիդե գործվածքից: ՈՒսադիրի ստորին եզրից 25 մմ և իրարից՝ կենտրոնից կենտրոն 25 մմ հեռավորության վրա ասեղնագործված են երկու հատ 13 մմ տրամագծով աստղեր: Աստղերի գույնը՝ մուգ կանաչ: Ուսադիրի հակադարձ կողմը պետք է պատված լինի նույն երանգի առնվազն 210 գրամ մակերեսային խտությամբ գործվածքով: Ուսադիրի հակադարձ կողմում՝ ներքին եզրակարից 35 մմ հեռավորության վրա ուսադիրի լայնությամբ մշակված է 20 մմ լայնքով պոլիվինիլքլորիդե /ՊՎԽ/ թաղանթից կամրջակ, որի միջով անցնում է ուսադիրի ամրացման լեզվակը: Ուսադիրների երկարությունը՝ 12.5 սմ և 13.5 սմ, իսկ լայնությունը՝ 5.0 սմ: Մատակարարվելիք քանակի 40%-ը պետք է լինի 12.5 սմ երկարության, իսկ 60%-ը՝ 13.5 սմ:

Փաթեթավորումը արկղերով, քանակը մեկ արկղում՝ մինչև 500 զույգ: Արկղերը պիտակավորված, պիտակների վրա պետք է նշված լինի տեսականու անվանումը, քանակը, մատակարար և արտադրող կազմակերպության անվա-նումը, արտադրման տարեթիվը: Բոլոր չափսերի թույլատրելի շեղումը մինչև 3%:

Ուսադիրի դաշտի զարդանախշը համաձայն Հավելված 1:

Ծանոթություն .

1. Մատակարար կազմակերպությունը մատակարարումից առաջ պետք է ՀՀ ՋՈՒ թիկունքի վարչության համաձայնեցմանը ներկայացնի երկու օրինակ նմուշ ամրացված գծագրական թղթի վրա: Ներկայացված նմուշը ստորագրում է մատակարարը, համաձայնեցվում է ՀՀ ՋՈՒ ԹՎ իրային ծառայության պետի հետ և հաստատվում կամ մերժվում է ՀՀ ՋՈՒ թիկունքի պետ- վարչության պետի կողմից, ներկայացնելուց ոչ ուշ քան երեք աշխատանքային օրվա ընթացքում:
2. Մատակարարվող ապրանքատեսականին պետք է լինի նոր և չօգտագործված:
3. Ապրանքների մատակարարումը հնարավոր է իրականացնել փուլային ձևով:
4. Ապրանքները չի հանդիսանում հիմնական միջոց:
5.Հայտով ներկայացված ապրանքատեսակների համար երաշխիքային նամակ կամ համապա-տասխանության սերտիֆիկատ չի պահանջվում:
6. Կնքվելիք պայմանագրով նախատեսված ապրանքների տեխնիկական բնութագրերին համապատասխանող և դրա որևէ բաղադրիչի գծով որակական հատկանիշները գերազանցող ապրանքներ մատուցելու դեպքում հնարավոր է ապրանքների ընդունումը, եթե առկա է հայտը նախագծող ներկայացուցչի (ներկայացուցիչների) գրավոր մասնագիտական եզրակացությունը:

ԳՆՈՐԴ | **ՎԱՃԱՌՈՂ**

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ

Կ.ԲՐՈՒՏՅԱՆ

ՌԻՄՆԱ ՍՊԸ տնօրեն

Ա.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հավելված 1



ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	Հ/մ	Քանակը	Միավորի գինը (ՀՀ դրամ)	Ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	
1.	Ուսադիր գնդապետի	զույգ	1600	1800	2880000	Ապրանքների մատակարարումը կիրականացվի համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում, համաձայնագրում սահմանված ժամկետներում՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի № 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի «ը» պարբերության պահանջներ: Ընդ որում մատակարարումը պետք է իրականացվի համաձայնագիր կնքումից հետո 20-ից 25-օրվա ընթացքում:
2.	Ուսադիր փոխգնդապետի	զույգ	4000	1750	7000000	
3.	Ուսադիր մայորի	զույգ	3200	1700	5440000	
4.	Ուսադիր կապիտանի	զույգ	1400	1750	2450000	
5.	Ուսադիր ավագ լեյտենանտի	զույգ	600	1650	990000	
6	Ուսադիր լեյտենանտի	զույգ	600	1600	960000	
7	Ուսադիր ավագ ենթասպայի	զույգ	600	1650	990000	
8.	Ուսադիր ենթասպայի	զույգ	1000	1600	1600000	

Ծանոթություն՝ ապրանքատեսակները պետք է մատակարարվեն ՀՀ ՊՆ կենտրոնական իրային բազա (ք. Երևան, Արցախի 61) մատակարար կազմակերպության միջոցով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ

Կ.ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

ՌԻՄՆԱ ՍՊԸ տնօրեն

Ա.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հավելված N 2
N ԳՀԱՊՁԲ-22-7/39-1 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Հ/հ	Գնման առարկայի անվանումը	CPV կոդը	գումար	
1.	Ուսադիր գնդապետի	35811190/542	2880000	Նախատեսվում է ֆինանսավորել համապատասխան ֆինանսական միջոցների առկայության դեպքում
2.	Ուսադիր փոխգնդապետի	35811190/543	7000000	
3.	Ուսադիր մայորի	35811190/544	5440000	
4.	Ուսադիր կապիտանի	35811190/545	2450000	
5.	Ուսադիր ավագ լեյտենանտի	35811190/546	990000	
6.	Ուսադիր լեյտենանտի	35811190/547	960000	
7.	Ուսադիր ավագ ենթասպայի	35811190/548	990000	
8.	Ուսադիր ենթասպայի	35811190/549	1600000	

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ

Կ.ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

ՌԻՄՆԱ ՍՊԸ տնօրեն

Ա.ՀԱՄԲԱՐՁՈՒՄՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԱՊՁԲ-22-7/39-1 *պայմանագրի*

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատակարարել է հետևյալ ապրանքները՝

N	Մատակարարված ապրանքների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ապրանքը հանձնեց	Ապրանքը ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
N ԳՀԱՊՁԲ-22-7/39-1 *պայմանագրի*

ԱԿՏ N _____
պայմանագրի արդյունքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Գնորդ) և _____
Գնորդի անվանումը Վաճառողի անվանումը
(այսուհետ՝ Վաճառող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
պայմանագրի շրջանակներում Վաճառողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Գնորդին հանձնեց ստորև նշված ապրանքները.

Ապրանքի		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
Ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն